

4-րդ բաժին - Նպաստներ և ծառայություններ

Medi-Cal-ի նպաստներ, որոնք ֆինանսավորվում են Anthem-ի կողմից

Ամբուլատոր ծառայություններ

Հետծննդաբերական խնամքի ժամանակավոր ընդլայնման ծրագիրը փոխարինվել է նոր հետծննդաբերական խնամքի ընդլայնման ծրագրով:

Հետծննդաբերական խնամքի ընդլայնման ծրագիրը

Հետծննդաբերական խնամքի ընդլայնման ծրագիրը տրամադրում է ընդլայնված ապահովագրական ծածկույթ Medi-Cal-ի անդամների համար և՛ հղիության ընթացքում, և՛ դրանից հետո:

Հետծննդաբերական խնամքի ընդլայնման ծրագիրն ընդլայնում է ապահովագրական ծածկույթն Anthem-ի կողմից հղիության ավարտից հետո մինչև 12 ամիս՝ անկախ եկամտից, քաղաքացիությունից կամ ներգաղթի կարգավիճակից, և հարկավոր չէ կատարել որևէ լրացուցիչ գործողություն:

Ամբողջ գենոմի արագ հաջորդականացում

Ամբողջ գենոմի արագ հաջորդականացումը (rWGS), ներառյալ անհատական հաջորդականացումը, եռյակի հաջորդականացումը ծնողի կամ ծնողների և իրենց փոքրիկի համար, ինչպես նաև գերարագ հաջորդականացումը ֆինանսավորվող նպաստ է Medi-Cal-ի ցանկացած անդամի համար, ով մեկ տարեկան կամ ավելի փոքր է և ստանում է ստացիոնար հիվանդանոցային ծառայություններ ինտենսիվ խնամքի բաժանմունքում: rWGS-ը նոր ի հայտ եկող մեթոդ է՝ ժամանակին ախտորոշելու այն խնդիրները, որոնք ազդում են ICU-ի խնամքում գտնվող մեկ տարեկան կամ ավելի փոքր երեխաների վրա: Եթե Ձեր երեխան իրավասու է California Children's Services-ի (California-ի երեխաներին տրվող ծառայություններ, CCS) համար, CCS-ը կարող է պատասխանատու լինել՝ ֆինանսավորելու հիվանդանոցում մնալը և rWGS-ը: